NICOLAS MATHIEU

Leurs enfants après eux

ROMAN

ՆԻԿՈԼԱ ՄԱՏՅՈ

Հոգատարությունն է իրական հեղափոխություն

ՎԵՊ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Լիլիթ Բլեյանի

new
ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 821.133.1-31 Մատյո
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Մ 336

Մատյո Նիկոլա
Մ 336 Եվ զավակներն էլ՝ իրենցից հետո: Վեպ / Ն. Մատյո.- Եր.:
Newmag, 2025.- 452 էջ:

Նիկոլա Մատյոն գրել է ֆրանսիական մեծ վեպ մի սերնդի մասին, որը պետք է իր ուղին գտնի փոփոխվող աշխարհում: Բայց ինչպե՞ս, եթե կյանքի դրաման սկսվել է պատանեկան մի աննշան որոշումից:

Չորս ամառ, չորս էպիզոդ՝ Nirvana խմբի հիթերից մինչև 1998-ի ֆուտբոլի աշխարհի գավաթը: Գիրքը պատմում է 1990-ականների Ֆրանսիայի, փոքր քաղաքների ու պանելային թաղամասերի, լողափերի ձանձրույթի ու լքված գործարանների մասին: Գործազուրկ ծնողների զավակները, որոնց համար մեծ երազանքը շռայլություն է, լսում են Nirvana, մոպեդ քշում, խոտ ծխում ու երազում սեքսի մասին: Կյանքը սեղմված է հուշերի ու անկման, բարեկրթության ու կոպտության միջև:

«Եվ զավակներն էլ՝ իրենցից հետո» վեպն արժանացել է ֆրանսալեզու գրականության ամենահեղինակավոր «Գոնկուր» մրցանակին, անգլերեն թարգմանությունը՝ ստացել «Ալբերտին» մրցանակ: Թարգմանվել է 20 լեզվով: Վեպի հիման վրա 2024-ին նկարահանվել է համանուն ֆիլմը, որը ներկայացվել է Վենետիկի միջազգային կինոփառատոնում:

18+

ՀՏԴ 821.133.1-31 Մատյո
ԳՄԴ 84(4Ֆր)-44

Գլխավոր գործընկեր՝
ՍԻՆԵՄԱ ՍԹԱՐ
cinemastar.am

ISBN 978-9939-482-05-7
© ACTES SUD, 2018
Նիկոլա Մատյո «Եվ զավակներն էլ՝ իրենցից հետո» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

ՄԱՍ I 1992

Smells Like Teen Spirit 11

Գլուխ 1 13
Գլուխ 2 28
Գլուխ 3 35
Գլուխ 4 43
Գլուխ 5 58
Գլուխ 6 75
Գլուխ 7 86
Գլուխ 8 103
Գլուխ 9 112
Գլուխ 10 121
Գլուխ 11 136
Գլուխ 12 147
Գլուխ 13 160

ՄԱՍ II 1994

You Could Be Mine 169

Գլուխ 1 171
Գլուխ 2 188
Գլուխ 3 200
Գլուխ 4 216
Գլուխ 5 231

Գլուխ 6 246
Գլուխ 7 254
Գլուխ 8 266
Գլուխ 9 276
Գլուխ 10 285
Գլուխ 11 294

Մաս III Հուլիսի 14, 1996
LA FIEVRE 307

Գլուխ 1 309
Գլուխ 2 323
Գլուխ 3 335
Գլուխ 4 356
Գլուխ 5 363
Գլուխ 6 378
Գլուխ 7 387
Գլուխ 8 391

ՄԱՍ IV 1998
I Will Survive 401

Գլուխ 1 403
Գլուխ 2 414
Գլուխ 3 422
Գլուխ 4 429
Գլուխ 5 440

Երախտագիտության խոսք 451

Նվիրում եմ Օսկարին

Եվ նրանց մեջ կան այնպիսիք, որոնցից հիշատակ չի մնացել,
Մոռեցել են, ասես չեն էլ եղել, ասես դարձել են անգոյ,
Եվ զավակներն էլ՝ իրենցից հետո:

Սիրաքի իմաստություն, 44.9

I

1992
Smells Like Teen Spirit *

* Smells Like Teen Spirit (անգլ.) - «Դեռահաս ոգու բույր», ամերիկյան Nirvana խմբի երգերից (Nevermind ալբոմ, 1991): (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի)

1

Անտոնին ափին կանգնած դիմացն էր նայում:
Լճի ջուրը արևի հետ նույն մակարդակի վրա էր ու նավթի պես ծանր էր թվում: Ժամանակ առ ժամանակ ջրի տակով մի կարպ կամ գայլաձուկ էր լողում՝ կնճռոտելով այդ թավիշը: Տղան հոտոտեց օդը, որում ծանրացել էր ցեխի ու տաքացած հողի ծանոթ բույրը: Հուլիսը պեպեններ էր ցանել նրա թիկունքին, որն արդեն լայնացել էր: Հագին միայն հին ֆուտբոլային շորտ էր, աչքերին՝ կեղծ Ray-Ban: Սպանիչ շոգ էր, բայց դրա վրա չէիր կարող բարդել բոլոր մեղքերը:

Անտոնին նոր էր դարձել տասնչորս տարեկան: Թեթև քաղցը հագեցնելու համար կարող էր Vache qui Rit փափուկ պանիր լցնել ամբողջական բագետի մեջ ու խժռել: Գիշերները երբեմն դնում էր ականջակալն ու երգեր գրում: Նրա ծնողները հին սերնդի մարդիկ էին: Արձակուրդից հետո ավագ դպրոցի երրորդ դասարան պիտի գնար:

Զարմիկը թքած ուներ ամեն ինչի վրա: Անցած տարի, երբ ճամբար էր գնացել, Կալվիի շուկայից մի սիրուն սրբիչ էր գնել, որի վրա պառկած ննջում էր հիմա: Նույնիսկ այս դիրքում մեծ էր երևում: Բոլորը կարծում էին՝ քսաներկու կամ քսաներեք կլինի: Զարմիկն ինքն էլ օգտվում էր իր գործած տպավորությունից ու այցելում այնպիսի տեղեր, որտեղ գտնվելու իրավունք չուներ՝ բար, ակումբ, նաև աղջիկների հետ էր հանդիպում:

Անտոնին կիսատաբատի գրպանի մեջ խցկած տուփից մի սիգարետ հանեց ու զարմիկին հարցրեց՝ նա է՞լ է կարծում, որ այսպես կարելի է ձանձրույթից մեռնել:

Զարմիկը տեղից չշարժվեց: Նրա մաշկի տակ գծագրվում էր մկանների հստակ պատկերը: Երբեմն մի ճանճ էր նստում թևատակի ծալքին: Այդ պահերին մաշկը դողում էր՝ ձիու կաշվի պես, երբ բոռը վրա էր տալիս: Անտոնին կուզեր լինել այդպիսին՝ սլացիկ մարմնով, մկանուտ կրծքով: Ամեն

իրիկուն նա իր սենյակում մարզանք էր անում՝ կքանստումներ, որովայնի պրես: Բայց անօգուտ: Նա դարձյալ նույն քառակուսին էր՝ ծանր, սթեյքի պես: Մի անգամ դպրոցում ուսուցիչը նրան նեղել էր՝ ծակած գնդակի համար: Անտոնին նրան հանդիպում նշանակեց ելքի մոտ: Ուսուցիչն այդպես էլ չեկավ: Այդ ամենին գումարած՝ զարմիկի Ray-Ban ակնոցն իսկական էր:

Անտոնին սիգարետ վառեց ու հոգոց հանեց: Զարմիկը լավ գիտեր նրա ուզածը: Անտոնին օրեր շարունակ հոգին հանում էր, որ գնան մոտակա «բաց քամակների» լողափ, չնայած դրա անունն այդպես էին դրել լավատեսության ավելցուկից. այնտեղ հազիվ միայն թոփլես աղջիկներ տեսնեիր, այն էլ եթե բախտդ բերեր: Ինչ որ է, Անտոնին այդ մտքով էր ապրում:

— Արի, գնացինք:

— Չէ՛,– մրթմրթաց զարմիկը:

— Արի, էլի, խնդրում եմ:

— Հիմա չէ: Հիմա գնա, լողա:

— Ճիշտ ես…

Անտոնին տարօրինակ, թախծոտ հայացքով նայեց ջրին: Նրա աջ կոպը ծուլորեն կիսափակ էր՝ աղավաղելով դեմքը և մշտապես խոժոռ տեսք հաղորդելով նրան: Այ քեզ թարսություն: Խեղդող շոգն էլ՝ մյուս կողմից, նաև այս անճոռնի, տձև մարմինը, 43 համարի ոտքերն ու դեմքի պզուկները: Լողալ… Ձեռ է առնում իրեն: Անտոնին թուքը ճստացրեց ատամների արանքից:

Դրանից մի ամիս առաջ Կոլենների որդին խեղդվել էր: Հուլիսի 14-ն էր, մտապահելը հեշտ էր: Այդ գիշեր շրջակայքի բնակիչները մեծ խմբերով եկել-հավաքվել էին լճափին ու մոտակա անտառում՝ հրավառությունը տեսնելու: Խարույկներ էին վառել, խորոված արել: Կեսգիշերից քիչ անց սովորականի պես քաշքշոց էր սկսվել: Զորամասի զինվորներն ու ZUP-ի* արաբներն իրար հրմշտել էին, հետո մեջ էին ընկել Հեննիկուրի հաստագլուխները: Ի վերջո, միացել էին արշավականները, հիմնականում՝ երիտասարդներ, բայց մեջները նաև ընտանիքի հայրեր կային՝ տռզած փորերով ու արևայրուքով բելգիացիներ: Ծեծկռտուքի վայրում հաջորդ օրն

* ZUP (ֆր.՝ zone à urbaniser en priorité) – «Առաջնահերթ կառուցապատման գոտի», 1970-1980-ականներին մեծ քաղաքների ծայրամասերում կառուցված արվարձաններ, որոնց հիմնական բնակիչները հետագայում դարձան Հյուսիսային Աֆրիկայից ներգաղթածները:

ամենուրեք յուղոտ թղթեր էին, փայտի արնոտ կտորներ, կոտրած շշեր ու նույնիսկ մինի յախտա՝ ծառի ճյուղերի վրա: Արտասովոր տեսարան էր: Բայց կրտսեր Կոլենին չգտան ու չգտան:

Գիտեին, որ երեկոն լճափին էր անցկացրել: Վստահ էին, քանի որ այնտեղ էր եկել իր ընկերների հետ, որոնք հետո վկայություն էին տվել: Սովորական երեխաներ էին. Առնո, Ալեքսանդր ու Սեբաստիան, բոլորն էլ նոր էին դպրոցն ավարտել ու դեռ վարորդական իրավունք չունեին: Եկել էին ավանդական ծեծկռտուք դիտելու՝ առանց անձնապես ներգրավվելու մտադրության: Բայց դե՝ ակամա ներքաշվել էին: Հետո կատարվածն արդեն մշուշի մեջ էր: Մի քանիսն իբր վիրավոր մի տղայի էին տեսել: Ասում էին՝ շապիկն արնաշաղախ էր, կոկորդի վերքը բաց բերանի պես էր, ասես թաց, սև խոռոչ լիներ: Խառնաշփոթի մեջ ոչ ոք օգնություն չէր ցուցաբերել: Առավոտյան պարզվել էր, որ կրտսեր Կոլենի անկողինը դատարկ է:

Հաջորդ օրերին ոստիկանության պրեֆեկտը որոնումներ էր սկսել շրջակա անտառներում, ջրասուզակները լճի հատակն էին սանրել: Բացբերանները ժամեր շարունակ նայում էին, թե նարնջագույն «Զոդիակն»* ինչպես է հետուառաջ անում ջրերի վրայով: Ջրասուզակները նավակից մեջքի վրա ջուրն էին ընկնում խուլ չլմփոցով, հետո բոլորը սպասում էին մեռելային լռության մեջ:

Ասում էին, որ Կոլենի մայրիկը հիվանդանոցում է, հանգստացնող դեղերի ազդեցության տակ: Ասում էին նաև, թե նա կախվել է: Կամ իբր տեսել են, թե ինչպես է գիշերաշապիկով թափառում փողոցներով: Կոլենի հայրիկը տեղի ոստիկանությունում էր աշխատում: Նաև որսորդ էր: Բոլորը վստահ էին, որ դա արաբների ձեռքի գործն է, ուստի հույսեր կային, որ նա դրանց հաշիվները կմաքրի: Հայրն այն թիկնեղ կերպարն էր, որն անշարժ նստած էր փրկարարների նավակում՝ ճաղատն արևի կրակին դեմ տված: Մարդիկ ափից հետևում էին նրան, նրա անշարժությանը, անտանելի հանդարտությանը և արևի տակ դանդաղ եփվող գանգին: Այդ համբերությունը վրդովեցնող էր: Լավ կլիներ՝ մի բան աներ, գոնե երբեմն շարժվեր, մի գլխարկ դներ:

Հետո տեղացիներին խիստ հուզել էր թերթում տպագրված լուսանկարը: Նկարում կրտսեր Կոլենն էր՝ մեծագլուխ, անհեթեթ դեմքով, գունատ, մի

---

* «Զոդիակ» – փոքր, փչվող, ռետինե մոտորանավակի տեսակ

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark